

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/7

17 հունիսի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Աննա Աղաջանյանի 14.05.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

Քաղաքացի Աննա Աղաջանյանի գանգատում բերված փաստարկները.

Ըստ գանգատի, 18.04.2014 թ-ին քաղաքացի Աննա Աղաջանյանի (այսուհետ նաև գանգատաբեր) և ՊԵԿ-ի միջև կնքվել է արխիվացման ծառայությունների մատուցման պայմանագիր:

Աշխատանքները սկսելու օրվանից ՊԵԿ աշխատակիցների կողմից ցուցաբերվում է միայն այնպիսի վերաբերմունք, որն արհեստականորեն խոչընդոտում, բարդացնում և դանդաղեցնում է աշխատանքային պրոցեսը: Մասնավորապես, արդեն չորրորդ օրն է Մասիս Լալայանից, Զվարթնոց մաքսատնից գանգատաբերը խնդրում է տրամադրել Զվարթնոց մաքսատան 2008 թ-ի արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների գործերի քանակը, սակայն այն իրեն չեն տրամադրում և առաջարկում են, որպեսզի մոտավորապես 175 գրքերի մեջ հատ-հատ հաշվի, ինչը օրեր կտևի, իսկ համակարգչի միջից այդ տվյալները նայելն ու ասելը թույլատրելի հարց է: Նույն վիճակն է նաև Շենգենյան հարկային տեսչության գործերն արխիվացնելու հարցում:

Գանգատաբերն անընդհատ պահանջում է լուծարված հարկատուների ցանկը, բայց իրեն առաջարկում են հատ-հատ ցուցակագրել պետ ռեգիստրի կայքով ճշտել, թե որն է լուծարված, որը՝ ոչ, և ՊԵԿ-ի շենքում տեսակավորել: Այդպես էլ այդ ցուցակը իրեն չի տրամադրվել, որի պատճառով աշխատանքները կիսատ են մնացել: Պատճառաբանվել է, որ ՊԵԿ-ի արխիվում բանվորներն ինչ-որ աշխատանքներ են կատարում:

Գանգատաբերը մրցույթներով կազմակերպված ծառայությունների մատուցումը ժամկետների մեջ տեղավորվելու խնդիր ունի, սակայն չորրորդ օրն է, իրեն որևէ թիվ չեն ասում, որպեսզի ակտը (ոչնչացման ենթակա փաստաթղթերի) գրվի և հանձնվի հաստատման:

Զվարթնոց մաքսատան գրքերի մեջ եղել են քանդված գրքեր, ու ՊԵԿ աշխատակիցները որևէ թիվ ասելու փոխարեն պատասխանել են, որ գրքերը նորից կկարվեն, թող ինքը հատ-հատ հաշվի:

Գանգատաբերը երեք անգամ դիմել է ՊԵԿ աշխատակազմի ղեկավարին, բայց իր հարցերին լուծում չի տրվել (բացառությամբ ժամկետի երկարաձգման): Մինևույն ժամանակ խնդրել է, որ իրեն թույլատրեն իր հետ օգնական գա, սակայն դա էլ չեն թույլատրել: Ժամկետը երկարաձգել են, բայց նորից արհեստական բարդություններ են ստեղծում, որի հետևանքով վերոգրյալ երկարաձգումը դառնում է անիմաստ: Գանգատաբերը հուսով է, որ իր հարցերին լուծում կտրվի, քանի որ նման վերաբուրմունքի շարունակման դեպքում արխիվացման պրոցեսը շատ երկար կտևի:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար արխիվացման ծառայությունների գնման նպատակով 2014 թ-ի մարտի 31-ին գնումների էլեկտրոնային

համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.03.2014 թ-ին ներկայացված գնման հայտի հիման վրա կազմակերպվել է գնման գործընթաց: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.01.2014 թ-ի թիվ 31-Ա հրամանի համաձայն գնման գործընթացի մասով պատասխանատու ստորաբաժանումը հանդիսանում է Քարտուղարությունը:

ՊԵԿ-ՇՀՏՁԲ-14-2-11/12 (ԳԱԿ-ՇՀՏՁԲ-11/12) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել Ֆ/Ա Աննա Աղաջանյանը և «Արխիվիստ» ՍՊԸ-ն: ՊԵԿ-ՇՀՏՁԲ-14-2-11/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը Ֆ/Ա Աննա Աղաջանյանին ճանաչել է որպես ընտրված մասնակից, որպես ամենացածր գին առաջարկած մասնակից: ՊԵԿ-ՇՀՏՁԲ-14-2-11/12 (ԳԱԿ-ՇՀՏՁԲ-11/12) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարվել է անգործության ժամկետ: Անգործության ժամկետի ավարտից հետո 2014 թ-ի ապրիլի 18-ին կնքվել է «Արխիվացման ծառայությունների մատուցման» ՊԵԿ-ՇՀՏՁԲ-14-2-11/12-1 ծածկագրով պետական գնման պայմանագիր՝ 3.997.150 դրամ ընդհանուր գումարով:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է, որ Կատարողը մինչև 2014 թ-ի հունիսի 2-ը պետք է իրականացնի «Անձնակազմին վերաբերող գործերի առանձնացում և ձևավորում» 20 գործ, «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման ակտի կազմում» 12000 գործ ու ծառայության մատուցման ավարտից հետո Պայմանագրի 3.1 կետին համապատասխան Պատվիրատուին ներկայացնի հանձնման-ընդունման արձանագրություն: Սակայն նշված ժամկետում Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չի մատուցել վերոհիշյալ ծառայությունները և չի ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատասխանատու ստորաբաժանումը Ֆ/Ա Աննա Աղաջանյանին գրությամբ տեղեկացրել է, որ ծառայությունը չմատուցելու դեպքում Պայմանագրի 2.1.3 կետին համապատասխան Պայմանագիրը միակողմանի կլուծվի, սակայն մինչ օրս Ֆ/Ա Աննա Աղաջանյանը չի ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրությունը: Միաժամանակ հարկ է նշել, որ Ֆ/Ա Աննա Աղաջանյանի խնդրանքով գնման պայմանագրում կատարվել է փոփոխություն, որի համաձայն «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման ակտի կազմում» ծառայության 1-ին խմբաքանակի 6000 գործ մատուցման ժամկետը երկարաձգվել է: Սակայն, ծառայությունները սահմանված ժամկետում և արխիվային գործի կանոններին համապատասխան մատուցելու փոխարեն, Աննա Աղաջանյանը Պատվիրատուին պարբերաբար ներկայացրել է պայմանագրով չնախատեսված պահանջներ: Այսպես, նա պահանջել է, որ իրեն հատկացնեն լուծարված հարկատուների ցանկը, իրեն թույլ տան կարգավորման աշխատանքներում ներգրավել այլ անձի (անձանց), առանց որևէ հիմնավորման անընդհատ պնդել է, որ պայմանագիրը սխալ է կազմված:

Աննա Աղաջանյանին Պատվիրատուի կողմից պարզաբանվել է, որ կազմակերպությունների գրանցումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, հետևապես անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է ստանալ նշված գործակալությունից:

Երկրորդ, Աննա Աղաջանյանին պարզաբանվել է, որ պայմանագրով նախատեսված չէ հնարավորություն մեկ այլ անձի կարգավորման աշխատանքներում ներգրավելու համար: Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 778 հոդվածի համաձայն ծառայությունները մատուցվում են անձամբ:

Երրորդ, Աննա Աղաջանյանին պարզաբանվել է 18.04.2014 թ-ին կնքված ՊԵԿ-ՇՀՏՁԲ-14-2-11/12-1 ծածկագրով «Արխիվացման ծառայությունների մատուցման» գնման

պայմանագիրը կնքվել է «ԳԱԿ-ՇՀՇՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան: Ընդ որում, մինչև պայմանագրի կնքելը Աննա Աղաջանյանին էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով ուղարկվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը, պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածը, դրանում ներառված տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը: Ծառայությունների մատուցման պայմանագիրը ստորագրելուց առաջ, որպես պայմանագրի կողմ, Ա.Աղաջանյանինը պարտավոր էր ուսումնասիրել պայմանագրով սահմանված պահանջները, և եթե համաձայն չէր առաջարկված պայմանների հետ, կարող էր չստորագրել այն: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի, Ա.Աղաջանյանինը կարող էր նաև գնման գործընթացի ժամանակ գրավոր բողոքարկել կամ նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, պատվիրատուից պահանջել պարզաբանումներ՝ հրավերով սահմանված պայմանների վերաբերյալ: Սակայն օրենքով սահմանված կարգով Ա.Աղաջանյանը ոչ մի գրավոր բողոք չի ներկայացրել և ստորագրել է պայմանագիրը:

Պայմանագրի կատարման ընթացքում Ա.Աղաջանյանը բարձրացրել է մի շարք մասնագիտական հարցեր, որոնց պարզաբանման համար Պատվիրատուն գրությամբ դիմել է Հայաստանի Ազգային արխիվին: Վերջինից ստացված պատասխան գրությամբ հիմնավորվել է բարձրացված մասնագիտական հարցերի վերաբերյալ Ա.Աղաջանյանի կողմից սխալ դիրքորոշում ունենալու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Աննա Աղաջանյանի գանգատը ենթակա է մերժման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Քաղաքացի Աննա Աղաջանյանի 14.05.2014 թ-ի դիմում-գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ